



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a **Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported** (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

U-94

6884

Апрѣльск. 3м.

Зем. групп. гуд.
фотрпл. Саянск.

Г. Духа
1887.

891.99

4-96

Այ.

Printed in Turkey

ՆՈՐ ՏԱՐԻ

ԿԱՄ

ԳՈՔԻԿ ԾԱՂԿԱԳԱՂ

ՀԱՏԸՆՏԻՐ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԵԱՆՅ

ՀԱՆԱԲԵՅ

ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՐՄԷՆԵԱՆ



معارف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولشد

4. 1702 (1887)

891.99

4-96

ՏԳԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄ ԱՇԽԵԱՆ ԵՌԻՍՈՒՑԵԱՆ ԻՍՆ

1917

ՆՈՒԷՐ

ԱՆՄՈՒԱՅ ՅԻՇԱՏԱԿԻ

ԵՌԱՄԵՐ ՀԱՄԱՐՄԱՆ

Ա.Ռ.
ՎՍԵՄԱՇՈՒՔ

171

ԱՐԻԿ ԲԵԲԵՏԻ ՈՒՆԷՆԱՆ

Երբ իշխեցի ուղերձել զայս խուն վաստակ իմ
Ձերումդ վսեմութեան պանծալի Անուն , եւ այնու
գեղազարդել ճակատ գրքուկիս , չունիմ յաւակնու-
րին նոր փառաց շուք մը յաւելուլ Ձեզ , զոր ար-
դեն Պետութիւնն եւ Ազգն շքազարդած են , քան
որքան Ձեր անունովն փառաց նոր շուք մը յաւե-
լուլ Գործոյս , զոր Ձեր վսեմութեան հռչակեալ
մեծագործութեանց եւ հանրական բարերարութեանց
նկատմամբ տածած ազգային երախտագիտութեանս
եւ հրապարակային համակրանացս իբրեւ յիշատա-
կի արձան կանգնել տենչացի :

Աշխատասիրողն
Յ. ԱՐՄԵՆՆԱՆ

317
39

✓

2011

391. 99

66-96

Printed in Turkey

Յ Ա Ռ Ա Ջ Ա Յ Ա Ն



Մեղուի մը պէս գրական ծաղիկներէ քաղելով մեղր՝ կը յօրինեմ այս վեթակ, փոքրիկ ուսանողաց յանոյշ ճաշակ։ Հաղիւ կը յանդգնիմ՝ ծաղկանց այս փունջն ի ձեռին իջնել յասպարէզ, յայտնելով թէ հաւաքածոյիս մէջ սփռուած քերթուածներն հին և նոր ազգային քերթողաց բաղմապատիկ գրուածներէն խուն ինչ քաղուած են, և ես, յետին մշակ Ս. Ղ. գրականութեան միայն նոցա փառաց և աղնուաղոյն ներշնչմանց ծափահար լինել կը փափաքիմ յայսմ հրատարակութեան։

Չկարծուիմ թէ օտարի փետուրներով զարդարուած սիրամարդին պէս կուզեմ ներկայանալ, այլ Հայ հեղինակաց ընտիր ընտիր քերթուածներն յուսումն մանկանց ընծայելով յոյժ գոհ կը լինիմ իմովսանն ծառայել ազգային մանկտուոյն՝ հրահանգելով զայն գեղեցիկ իմաստից մէջ։

Յոյժ ստուար պիտի լինէր սոյն հաւաքածոյ, եթէ մեր ի ձեռին ունեցած քերթուածներն՝ գոհարք հայ

բանաստեղծից՝ զետեղելինք ներկայ գործոյս մէջ , բայց սա իբրեւ նախաքայլ կուգինք համարել և յետ քաջալերութեան՝ ընդարձակել հրատարակութեանս սահմանը :

Յաւաքտ զբքոյկիս գրինք ընտանեկան Բարձր-
 օրէ մի ուր բացի հաւաքածոյիս մէջ գրուած քերթ-
 ուածոց բառերէն գործածական բառեր զետեղեցինք
 այբուբենական կարգաւ՝ յուսումն բառապիտական :

Կը յուսամ թէ Մեծ. դատարարակայ ընդունելու-
 թեան կարժանանայ սա , և այսու իւր հասկստ ծա-
 ռայութիւնն կը մատուցանէ Ազգ. վարժարանաց նա-
 խակրթական դասուց :

Ի վերջոյ հետագայ իմաստալից նամակին վրայ
 ընթերցողաց ուշադրութիւնն կը հրուիրեմք , որ ընտ-
 րիւղոյն գրուածք մ'է իրաւամբ , և արժանի ստէպ
 վերծանութեան .



Առ Տիար Յարութիւն Արսէնեան

Ազնիւ բարեկամ

Գրքոյկ մ'էք ծաղկաքղեր և Նոր Տարի տիտ-
 յոսեր :

Ինձ յղեր էք զայն , ներկուռ վերծանումէ մը
 յիտոյ , յայտնել թէ ի՞նչու է , որպէս զի քանի մա-
 լուրց մէջ ճեպով տալարուի և մինչեւ կողանդ սպառի :

Գրքոյկ՝ որոյ մէջ կերպեն Հայոց գեղեցիկ դպրու-
 թեան ոսկեբերաններէն Արծուէթուհին Հայրիկ , Մե-
 ծահուչակն Մեղքիւնդեկ սրբազան , Գեղեցկախօսն
 Նար պէյ սրբազան . Անհաւատարելին Մ. Մամուր-
 եան , Վսեմաց վսեմն Օտեան , Անուան Պէշիկ-
 թաշեան . Փափկալիզու Դուրեաններ . Գեղա-
 հանճարն Տօգ. Ն. Ռուսիեան , Ազգասէրն Տօգ.
 Ն. Մեղպուրեան , Վսեմախօսն Ռ. Պէրպէրեան , Բիւ-
 ղաղիայ և բիւրնայ հողատաւիղն հայոց Ե. Տէմիր-
 ճիւղաշեան , Հիանալին Մ. Զեբազ , Հոմերականն Ռ.
 Թէրզեան , Հայ Մուսայից Բէնիամինը բոցալիւն Ա-
 ղէքսանդր Փանոսեան . գրքոյկ յորումուրիչ շատ մի-
 մեր հին և նոր պատկառելի և սիրելի քերդողաց հեա-
 կերպեն ինչպէս իրենց սեռին նոր փայլ նոյնպէս և մեր
 քնարին պարծանաց նոր թելեր յաւելող շատ մը յի-
 շատակելի քերդողուհեաց հեա և Տաղանդագեղն Զա-
 պէլ Խանճեան , և երկրքին քորք Սուքիասեան Զըք-
 նաղաձիւրն Մարի , և Վարդապետն Ռօզ , բոց ուսու-
 ցիչ է այս տողերու հեղինակն . լիահաւատ եմ թէ
 Նոր Տարի պիտի գտնէ իւր համակրալիր ընդունե-
 լութիւն ամենուր և ամենուտ : Նա՛ իբրեւ հատըն-
 տիր Տարեձօն՝ տիպար ընթերցման և տիպար արտա-

սանութեան դասագիրք մ'ալ կարէ լինել, ի պէտս
գպրոցականաց :

Գիրք տակել գպրոց բանալ է :

Դպրոց որ աշխիւ, գեղեցիկ, վսեմ փափուկ ըզ-
գայմանց վառարան և ներշնչարան լինի : Դպրոց որ
քաղաքակրթիչ գաղափարներու . լուսաւորիչ մտա-
ծումներու և բարոյաշէն սկզբանց զինարան և ըս-
տեղծարան հանդիսանայ :

Զեր գրքոյկ աւելի կարեւոր է, զի հոն բանաս-
տեղծն է որ կերպէ, և կերպէ իւր Երգ Երգոցն : Հոն
գրագէտն է որ կը գրէ, և կը գրէ իւր Գիրք Գրոցն :
Ի՞նչ և ո՞վ . քան զբանաստեղծութիւն աւելի, ներ-
գործած է մարդկային մտաց վերայ : Մարդկային ա-
մէն քաղաքակրթութեան խանձարուրին քով կայ
մի քնար, որպէս մէն մի օրօրանի քով կայ մի մայր,
Երգով մ'է սկսած մարդկութիւնն բարդաւածել 'ի
միտս, որպէս օրօրով մի կսկսի ածիլ մանուկն ի տիա-
երդել քաղաքակրթել է : Որ երգ չունի, սիրտ չու-
նի, միտք չունի, հոգի չունի : Աստուած իսկ քառ-
սէն զտիեզերքն արարչակերտած աստին, ջնարին լե-
զուն փոխ առաւ Մովսէսէն, և փոխ տուաւ նմա :
« Եղիցի՛ լոյսն » ասեղծագործութենէ աւելի բանաս-
տեղծութիւն մ'է : Եւ ո՞չ ապաքէն աշխարհի բոլոր
վաղեմի կրօնսդիր, օրէնսդիր, իմաստունք, քեր-
դող և երգիչ էին : Նո՞ր Կաթոլիկ ապա, իբրեւ նոր
երգարան, պիտի ունենայ իւր հանրօգուտ ազդեցու-
թիւնն : Մանկուոյն հետ մարդիկ ալ կօդտին նորա
ընթերցումէն : Ե՞ր կը խռովի թէ գրքիդ զիրքն փոքր
է : Դիրն թող մեծ լինի : Զի՞ փոյթ թէ գիրքն
մեծ է թէ փոքր, բաւ է թէ այն լինի խոստով, փո-

շակաւե՞ր և « ճշմարիտ » Երկիր մի կաւ և հանք մի կա-
պար ունենալէն նախապատիւ է ափ մի գոհարն և
Երակ մի ոսկին : Մարդկային բոլոր փառասիրութեանց
մէջ, անմահութեան փառասիրութիւն է որ զմարդ
աւելի կը նեղէ և կը հրապուրէ : Եւ քան զամէնն
ազգն անմահութեան՝ գերազանց է գրական անմա-
հութիւնն : Մարդկային բոլոր գործք և գիրք պիտի
անցնին և միայն բանաստեղծութիւնքն պիտի մնան,
որպէս բանքն աւետարանի . ճշմարիտ բանաստեղծն,
նման երկնային անմահ ոգիներու, կը մնայ յաւիտե-
նական երիտասարդութեան մի մէջ մշտադաւար, և
մշտաճաճանչ : Ո՛չ ապաքէն, ցսերկեան իւր հագ-
ներգոյն . Հոմեր յաւերժաշուք է աւելի քան զԱրա-
մազդ, իւր զիցափառ Ողիմպոսովն, և Մանդուի
կապարն իւր վերջին մեղետեաւն, աւելի վեհափառ
քան Օգոստոս՝ իւր տիեզերապանծ թագոյն, և աշ-
խարհակալ գահոյն :

Եւ վսեմ. Ունճեան, որ վարդապետէ մ'աւելի
կուսակրօն, որ հին հայրապետաց չափ մեծահաւատ
և մեծազօր ամիրայից չափ Տիրասէր և ազգասէր է-
ամենեւին անկաթօր բախտի, և իսպառ յափեւ վատքէ
ամանորի առթիւ ազգային մանկուոյն նուիրեալ Բա-
նաստեղծական մատենկէ մ'աւելի արժանաւոր ի՞նչ
Տաքէյծն կրնար ակնկալել Քեզ նման երիտասարդ՝
համեստ Դաստիարակէ մի, որ սնչքութեան ամպէն
յանալկնկալս դուրս չողալով ճաճանչէ նարօտ մ'եւս
դուք կապել կը տենչաք իւր արդէն ճաճանչայուղբ
ճակտին, որ սակայն հանրային գուրգուրալի համակ-
րանաց և հրապարակային երախտագիտութեան զըզ-
ուելի յայտարարութեան մը հանդէպ կը կրի այն-

քան հեղօրէն ու խանդաղատօրէն, որքան աղօթա-
տան մէջ, խաչելութեան պատկերի մ'առջեւ: Գրա-
նիշ Ազգային Վսեմի մ'աղերձելիք՝ ամէն համոզիչ
փաստէ գեր ի վերայ՝ տերձալեզու ապացոյց մ'է թէ՝
մուսայք եւս, ի կուշտ մեր ազգային մեծատուններու
լուկուլեան ապարանաց, ունին դեռ կանգուն վս-
տեան տաճար մի, և գեղեցիկ դպրութիւնք՝ մի մա-
տուռ ի պաշտումն հայրենի հին և նոր թերափնորուն:

Գնահատելով ապա Ազնիւ բարեկամ, զրքեկիդ
քննադատելի կողմնորոմն հոնգերձ, բանաստեղծա-
կան սոյն աշխատասիրութեանդ կը յաւելում յայտ-
նել բեզ թէ՝ որպէս զի սոյն օրինակ դործի ր փետուր
մը համբաւ և տերեւ մի վառք աւելի շահին ան-
խըծբիծ, Միտասայ պէս դառնելու չէ Ապողոնի քնարն
և Պանայ սրինգն: Ամէն ոտանաւոր բանաստեղծու-
թիւն չէ ինչպէս ամէն արձակ՝ պերճախօսութիւն
չէ: Ճշմարիտ գրագէտն է որ զայն զիտէ որոշել
որպէս զիտէ զայն գերազանցապէս գրել:

Մաղթելով ապա վարձատրելի յաջողութիւն և քա-
ջարեկի յարատեւութիւն կը յանձնարարեմ որ գոր-
ծոյդ Բ. տալին կամ Բ. մասին մէջ, նկատումէ և
աճապարումէ անկախակայ, աւելի յամառ և աւելի
անաչառ լինիս հեղինակներն և հեղինակութիւններն
կրկտագոյնս անցնելու մաղէն ու բովէն որպէս զի մեզ
աւելի շուտ և աւելի շատ ցցնես ցորենն ու դարին:

Ում ակն ունի Նոր Տարւոյ բոլոր վերձանողաց
և վերձանուհեաց հետ և բարեկամք:


1887 Նոյ. 26

յիւսկիտար իճատիէ

ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

ՓՈԳՐԻԿԼԵԱՂԿԱՔԱՂ



ՄԱՆՈՒԿՆ ԱՌ ԽԱԶ

Ո՛վ խաչափայտ,
Դու քառաթեւ,
Որոյ ճակատ՝
Սիրոյ արեւ
Գամուած Յիսուս
Փըչեց խոնարհ
Հոգի և լոյս
Սէր ընդ աշխարհ:

Ընդունէ իմ հոգին հեղիկ փառաճաճանչ
Թեւերուդ տակ և սորվեցուր ինձ հաւատ
Սէր, Յոյս որով բարախէ իմ փափուկ լանջ
Ի փարատէ լուսովդ խաւար սրտէս վըհատ:

Սորվիմ աղօթք
Դառնալ քեզի,
Երբ խութից ոտք
Իմ հանդիպի,
Սեւ սատանին
Որ ճրգնի միշտ
Դիւթել զհոգիս
Ի մութ ի վիշտ:

Պ. ԴՈՒՐԵԱՆ

ԱՍՏՈՒՆԾ

Մայրի՛կ, նայէ՛, ինչպէս սիրուն
 Են այս ծաղիկներ .
 Կարմիր, ճերմակ և ոսկեգոյն,
 Դաշտն է լեփ լեցուն :
 Ի՞նչ ալ անուշ հոտ ունին, մայր,
 Սիրեմ ես զանոնք,
 Մին է զմութստ, միւսը գոհար,
 Գոյն ունին վառ վառ :
 Մայր, ո՞վ արդեօք զանոնք ըրաւ .
 Ո՞վ ցանեց այսպէս :
 — Աստուած, տըղաս, նա որ տըլաւ
 Մեզ բարիք անբաւ :

Մայրի՛կ, նայէ՛, ի՛նչպէս աղւոր
 Են այս թռչուններ,
 Ունին փափուկ թեւ գունաւոր,
 Հանդերձ փառաւոր :
 Ճիւղէ ի ճիւղ կը թռչտին,
 Անտառն է բուններ
 Իրենց ճիւղ ճիւղ, ու երբ կամին՝
 Կը թեւեն յերկին :
 Մայր, ո՞վ արդեօք զանոնք ըրաւ,
 Այսպէս գեղեցիկ :
 Աստուած, տըղաս, նա՛ որ տըլաւ
 Մեզ բարիք անբաւ :

Մայրի՛կ, նայէ՛, ի՛նչպէս պայծառ
 Են այս առողիկներ .
 Կը փայլեցնեն յերկնից կամար,
 Ու են անհամար :
 Մին շքան զմիւսն է լուսագեղ,
 Եւ մթութեան մէջ
 Իրրեւ մէյմէկ վառին կանթեղ,
 Քանի՛ եւ շքեղ :
 Մայր, ո՞վ արդեօք զանոնք ըրաւ .
 Ո՞վ վառեց այսպէս :
 Աստուած, տըղաս, նա որ տըլաւ
 Մեզ բարիք անբաւ :
 Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՄԱՅՐԻԿ

Ո՞վ կերակրեց զիս՝ տալով ծիծ անուշ,
 Ո՞վ առաւ իր գիրկն որ ննջեմ մուշ մուշ,
 Իմ վարդ երեսիս ծաղիկներ թափեց .
 Մաքրիկս :
 Երբ իմ աչերէն փախաւ, քուն գնաց,
 Ո՞վ ինձ անուշիկ օրօքներ ասաց,
 Եւ թեւերուն մէջ օրեց որ չգամ .
 Մայրիկս
 Ո՞վ նստաւ հսկեց իմ մատաղ գլխուն,
 Երբ մէջ որբանիս ննջէի սիրուն,
 Եւ սիրոյ քաղցրիկ արտասուքներ թափեց :
 Մայրիկս :

Երբ կծու ցաւով կուլարի ես միշտ,
Ո՛վ իմ աչք սրբեց, թեթեւցաւ իմ վիշտ:
Ա՛հ ու դող ըզգաց որ ես չմեռնեմ:

Մայրիկս:

Ո՛վ վաղեց օգնել երբ ես բնկա՛վար,
Եւ պատեց ինձ վէպ որ լինի ինձ ճար,
Պաղաւ ցաւած անճն որ տանի դարման:

Մայրիկս:

Ո՛վ աղօթք ուսայց իմ բերնէս քնքուշ
Որ պաշտեմ զԱստուած լինիմ միշտ զգուշ
Եւ խելքով շնորհքով իմ կեանք անցունեմ:

Մայրիկս:

Նւ կրնամ երբէք մոռնալ քեզ հողիս,
Դու որ սիրեցիր և հողացիր դեմ,
Նւ այնչափ ցաւեր առ ոչ ինչ դրիր:

Մայրիկս:

Ո՛հ, այդպիսի բան մտքէս չի անցնիր,
Եւ դու, ո՛ւ Աստուած, իմ արեւ պահիր:
Յուսամ վարձատրել քու անբաւ հողեր:

Մայրիկս:

Իսկ երբ դառնաս դու տկար, պառաւուկ,
Իմ հզօր բազուկ քեզ լինի նեցուկ
Եւ պիտի սփոփեմ բոլոր քու ցաւեր:

Մայրիկս:

Եւ երբ տեսնեմ որ գլուխդ ծռի,
Ես պիտի հսկեմ քու մօտ սնարի,
Եւ սրտիս խորէն պիտի արտօսը թափեմ,

Մայրիկս:

Ծ. ՄԱՄՈՒՐԵԱՆ



ՄԱՂԹԱՆԻ

ՎԱՍՆ ԿԵՆԱՑ ՄԵԾԱՓԱՌ ԿԱՅՍԵՐ ՄԵՐՈՑ

ՍՈՒԼԹԱՆ ԱՊՑ-ԻՒԼ ՀԱՄԻՏ ԽԱՆ




Աստուած հըզօր, խընամակալ դու վերին,
Որ կեանս ընդ բնաւ սրբութեան լոյս ընդ երկին
Քեզ համօրէն մատչիմք յաղերս սրտազին,
Կեցոյ յաւէ՛ժ անսասան,
Ըզբազմագուլթ մեր Սուլթան:

Ընդ հովանեաւ խաղաղարար քոյ աջայդ,
Աղդ մեր, արքայ, զօրհանապազ կեաց անքոթ,
Շընորհ անբաւ ունել քեզ ցոսնկ է մեր փոյթ,
Կեաց դու յաւէ՛ժ անսասան,
Ո՛վ մեծազօր մեր Սուլթան:

Փա՛ւք դահոյից զորով փարիմք մեք, եղբարք,
Նովա՛ւ կեցին Հայք յանդորրու, վիայ են դարք,
Այ Տեառն հըզօր լիցի կայսեր պահապան,
Կեցցէ յաւէ՛ժ անսասան,
Սուլթան Ապա-իւլ-Համիտ Խան:

Ի 28 Սեպտեմբերի 1886

Յ. ԳՈՒՐԳԵՆ



ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՑ ՊԱՏԱՆԵԿԻ

Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ
 Դու գարնան սիրուն թռչնակ
 Դէպի ո՛ւր ինձ ասա
 Թռչում ես այսպէս արագ :

Ա՛խ թռիւր, ծիծեռնակ,
 Ծընած տեղս՝ Աշտարակ,
 Անդ չիմիր քո բունը
 Հայրենի կտուրի տակ .
 Անդ հեռու արեւոր
 Հայր մ՛ուշիմ սըգաւոր՝
 Որ միակ իւր որդուն
 Սպասում է օրէ օր :

Երբ տեսնես դու նորա՝
 Ինձնից շատ բարեւ արա .
 Ասա, թող նստի լայ
 Իւր անբազդ որդւոյն վրայ :
 Դու սրտամէ թէ ինչպէս
 Աստ անտէր ու խեղճ եմ նա՝
 Միշտ լալով, ողբալով
 Կեանքս մաշուել եղել կէս :

Ինձ համար ցեբեկը
 Մութ է չըջում արեգը՝
 Գիշերը թաց աչքիս
 Քունը մօտ չըգալիս :

Ասիւր, որ չի բացուած
 Թառամեցայ մենայած
 Ես ծաղիկ գեղեցիկ՝
 Հայրենի հողից զրկած :

ԴՈՂՈՒԵԱՆՑ



ՎԱՐԷ ՈՐԳԵԱԿ

Վարէ՛ Որդեակդ իմ Սամուէլ,
 Ուղի՛ղ վարէ զմաճն և ակօս .
 Արձակ դաշտերն են մեր արտեր,
 Պարարտ բերուն և բարեբեր,
 Եւ ես ցանեմ ցորենի հատեր,
 Քաղենք յուսով բազմապատիկ .
 Օրհնեա՛լ է հողն և սերմեր,
 Օրհնեա՛լ՝ մշակք եղնամոլներ,
 Օրհնեա՛լ է անդ և անդաստան,
 Օրհնեա՛լ Սասունած,
 Որ տայ անձրեւ և Սրբւ,
 Օրհնեա՛լ վաստակ երկրագործին,
 Արդար աղատ ի դժբանայ :

ԻՐԻՄԵԱՆ



ՄԱՆՈՒԿ ԵՒ ԱՐՏՈՒՏԻԿ

Դարանամուտ կամ վաղուց ես ընկի
Եւ ոչ դիւրաւ քեզ բերի ձեռք հիմիկ,
Պէտք է երգես իմ սիրուն Արտուտիկ,
Որ դու տաս սըրտիս զուարթ քու գայլայլիկ:

Մի՛ դողար ի տես վանդակիս անել,
Ծաղկօք եմ պատած ես անոր թերեր,
Դու քեզ մարգերու կրնաս մէջ կարծել,
Երգէ ինծի հետ թռչնիկ սիրաւեր:

Երբ գայ նոր գարուն բընութեան նոր ոյժ,
Եւ մեղի պայծառ օրեր ու տայ յոյս
Գողտրիկ մարմանդին մէջէն ձայնդ անոյշ .
Զամբիժ քու սիրոյդ կը տօնէ զինճոյս:

Այլ իմ քովս այժմիկ ընդէ՞ր կաս լըռած,
Կամ մինչ ես ձայնովս եմ քեզ աղերսարկու
Ա՛հ գուցէ ես քու ձայնիդ չեմ լըռած,
Թող ես, փորձ փորձեմ, օ՛ն երգէ՛ և դու .

Կամ ո՛հ, գուցէ ես քու անուն չեմ ուսած,
Թո՛ղ ես փորձ փորձեմ, օ՛ն երգէ՛ և դու:
Վախ, այսքան աղերս չը գտին չնորհ,
Եւ դու կաս մնաս միշտ խուլ ու պապանձ

Արդ թռի՛ր գնա՛ հաւիկդ ապաշնորհ,
Կուգեմ քեզ ընել գերի իմ կանայ:
Բայց խիտ հովանեաց տակ մէյ մ՛որ նետուիս
Առ երգերդ իսկոյն ու հեշտ զուարթիքդ,
Զի անտառներու տեսնեմ պէտք ունիս,
Որ զուրախութիւն երգես անգարդիկ,

Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

ՄԱՆԿՈՒԹԵԱՆ ՕՐԵՐ

Մանկութեա՛ն օրեր, երազի նման,
Անցար գնացիք, այլ չէք դառնալու,
Ո՛հ դուք երջանիկ, ո՛հ անհոգ օրեր,
Ընդունակ միայն ուրախացնելու:

Զեղանից յետոյ եկաւ գիտութիւն,
Իւր ծանր հայեացքով աշխարհի վերայ .
Ամէն բան ինկաւ մտածութեան տակ,
Բոպէ չը մնաց ազատ կամ ունայն:

Գիտակցութիւնը յաջորդեց սորան,
Տոհմիս վիճակը ծանրացաւ սրտիս . . .
Ապրիլն տուեց ինձ իւր քնարը,
Որպէս փարատիչ տրտում ցաւերիս:

Աւա՛ղ, այդ քնարը իմ ձեռքում հնչեց,
Նոյնպէս լալագին, նոյնպէս վշտահար,
Ինչպէս իմ սիրտն էր, իմ զգացմունքը.
Ուրախացուցիչ չի գտայ մի լար:

Մանկու թեանս օրերս ինչո՞ւ այդպէս շուտ
թռաք դնացիք անդարձ յաւիտեան ,
եւ այն ժամանակ անհոգ ու աղատ ,
կարծում էի ինձ աշխարհի իշխան :

Մ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆՑ



ԽՈՒՆԻ ԳՆԱՆՈՒԹԻՒՆ

Աղապապա՛ , ինձի աղուսը խոնգի մ'ա՛ռ .
Պրզտիկ բլլայ՛ , խարակօզ ու ճերմակ գառ ,
Նայէ՛ , խոտերն ի՛նչտար մեծ ծան , երկընցան
Մէջն է մշտեր , կը կոխկըռտէ Մարիցան :
Մեղքը չէ՞ , հայր , պոռա՛ կանչէ՛ քուրիկիս
Հովիւն ալ նա՛ , կ'անցնի . կանչէ՛ . գառնուկիս
Համար ըսէ՛ . . . : Բա՛ր շատ փարայ պիտի տաս
Մայիսին կաթ չի՞ տար . . . : Ինչո՞ւ կը խնդաս . .
Շատ խոտ կուտամ , բոլոր օրը թո՛ղ ուտէ
Ա՛ն մէկգիշն կը բռնի , ջուրն ալ մօտ է
Առտու իրկուն էս ջուր կուտամ՝ հաւուգեմ . .
Գառնուկիս ալ տամ ան ջուրէն , չըլլայ՛ գէն :—
Հայրի՛կ , ընտո՞ր ջուրը կաթի կը փոխուի . . .
Երկինքէն ալ լուսինն ընտո՞ր կը կախուի . .
Նայէ՛ , հայրի՛կ , գիտես քի՛ կաթ են թափեր
Երկինքը հո՞ն ալ գառներ կան . հոնկէ բեր .
Պագի պագի լուսնկան ալ պոյնուգի
Մը կը բմանի . իրա՞ն , հայրի՛կ , հոն խոնգի

կայ՛ , ամա մենք՝ ընտո՞ր կ'ըլլայ՛ չենք տեսնար
Աճապ գա՛ռ են մանտըր լուսերն անհամար .
Առտուն կանուխ ընձը կ'իջնան , խոտ կ'ուտեն
կանանչ խոտերն ըսել է քի՛ լուս , սիւտ են .—
Հովիւն անցաւ , չի կանչեցիր նէ , հայրի՛կ :
Նորէն կուգա՞ն . . . պրդտիկ , ճերմակ , կըլորիկ
Գառ մը զատենք . . . թող տը չի՞ տար ջօպանը
Ծաղիկ կու տանք . ու ես . . . իրեն գրպանը . . .
Ոսկի հաւկիթս ալ կը դբնեմ՝ որ տանի
Իր են տղուն . ան ալ աճապ գառ ունի՞ . . .
Աղուոր հայրի՛կ աղէկ որ դուն ջօպան չես .
Ա՛ն ի՛նչ մարդ է , մուստառ , ջիւքին , սեւերես .
Ամա ջօպան բլլա՛ իր նէ , շատ խոնգի
կ'ունենայի . . . — Չօպան մին ա՛լ , նա՛ . խոնգի՛ ,
խոնգի՛՝ կ'ուղեմ , աղապապա՛ , կանչէ՛ , բաց
Ջափուխ դուռը . Մ առի՛ , քաշէ՛ , դուռը բաց ,
խոնգի՛ն , նա՛ , խոտ . ջուր ալ կ'ուղես . մի՛ պօռար
Ինձի նայէ՛ . . . Է՛ջը . չէ՛ , ան չի զըռար :
Հայրի՛կ , խոնգիս կը վախնայ կար մեր էչէն .
Ըսէ՛ կըտոր մը թո՛ղ ետարք քաշեն .
Անկաճները երկա՛ն երկա՛ն աընկեր է .
Աչուրներն ալ խոշո՛ր խոշո՛ր . . . : Եկեր է
Աղամուճաս . թող էջը ներս տանի , հա՞ .
Էյ՛ր մէյ մը հանէ ծանը՝ հի՛իհա՛ ,
խոնգիս բանը բուսած է : Աղուորի՛կ ,
Ա՛ն ի՛նչ կակուղ , կըլոր , բամպակ , գէր փորիկ
Երեսս նայէ՛ . տաճա պոյնուգ ալ չունիս .
Թուշը սիրեմ . մեր պախմալին կը հաւնիս

Բիւրիսն քուկտ էն առ խոտերը. կե՛ր, մենծցի՛.
Ամա՛ն, ի՛նչու չուվանն ատանկ փաթտեցիր
Հիմակ ընտո՞ր խալըսեմ՝ քեզ. մի՛ դառնար,
կեցի՛, խոսգիս. կը խըխաղվիս... Չե՛մ կըրնար
Աղամուճա՛, հասի՛ր, ծանը մարեցաւ...
Էս հի՞ջ կ'ընեմ. ինք ըրաւ, փաթտըվեցաւ.
Պօռա՛ց պօռա՛ց... ի՛նչ ընենք, ընտո՞ր կապենկ
Քակե նկ կապը... կամայ ըրէ՛... նայէ՛, պինկ
Աշուկին քով, աղամուճաւ. աղուոր չե՞
Քուրիկիս շունն իմ գառնուկիս քով ի՛նչ է.
Թօբիկ խոսգիս, թօնթօ՛շ, պագենեմ երեսըդ
Ճակատ ճակտի՞, սիրե՛մ պըզտի քու բօսըդ...
Աղատեցի՛ր, աղամուճաւ, տուր քուկին
Ծառքդ ալ պագենեմ բան մը մ'ըսեր հայրիկին
Էս սորվեցայ կերպը, մէյ մըն ալ չըլլար.
Աղամուճաւ, մինակ մընայ նէ, չի՛լար...
Ես գիշերը... Օտաւ տեղ կայ... վեր տանի՛ն
Մութուն մինակ ընտո՞ր կենայ... հա՞ տանինք
Անու՛շ անո՛ւշ գիշերը կը քընանանք.
Թեփեր բեփեր առտուն ալ պախճան կիշնանք

Մի՛, մի պօռար, աղուոր խոսգիս, էս հոս եմ՝
ինծի դարձիր, էրեսդ էրեսիս քըսեմ.
Ախպարիկս էս. ունեցածս քույինն է.
Ճերմակ խոսգիս, ալ չեմ զատուիր ես քենէ
ինծի ինչ բան որ բերէ աղապապան
Կէսը քուկդ է. նըշխարք կուղե՛ս. Տէր պապան
Վաղը կուգայ... Ա՛յս, մէյ մը որ կաթ տայիր.

Խոտ կեր, խոսգիս. շատ կե՛ր... Առաջ ուր էյիր
Վե՛րն, էրկի՞նքը. հովուն անկէ՞ քեզ առաւ.
Նորէն չըլլայ որ հոն երթաս... ի՛նչ ծարա՛ւ.
Ձուր տամ՝ քեզի. չի պիտի հոն էլլաս հա՞.
Վար իյնաս նէ կըտոր կըտոր կըլլաս հա՞.
Դուն մի զատուիր քովէս, աղուոր իմ խոսգիս
Ամա թէոր ախպարիկներ վերն ունիս,
Ժամուն մէջէն էրկինք հանող ճամբայ կայ.
Պըտըտելու կերթանք որ մը. հետ կուգայ
Մեր տէրպապան, որ գառները կը սիրէ.
Ու գիտե՛ս, ի՛նչ կըսէ, իս երբ համբուրէ
«Գառնո՛ւկ, անմեղ գառնուկտե՛, քովիկս եկու.
Գառնուկն հիմայ, տէրպապաս, էղաւ էրկու

Ե. ՏԵՄԻՐԶԻՊԱՇԵԱՆ

ԲԱԺԻՆ ԽՄ

Իբր ըզթիթեռնիկ՝
Որ 'ի ծաղկէ թըռչի ծաղիկ,
Սըլանալ ճախրել զըլարթագին.
Խնդից 'ի խինդ անմեղ սըրտին:
Ա՛յս է քո բաժին:

Իբր ըզաերեւիկ՝
Որ 'ի բունոյն արտալածիկ,
Հողմոց 'ի հողմ վարի ցըրտին,
Վըշտաց 'ի վիշտ բախել ուժգին:
Ա՛յս է իմ բաժին:

Իբր ըզշուշանիկ՝
 Վէտ վէտ 'ի ջուրց ծրփինս մեղմիկ,
 Բուրեւ անոյշ յառաւօտին ,
 Եւ ըզմայլել զաջն և զոգին :
 Այս է քո բաժին :

Իբրու զեղէգնիկ՝
 Մեռեալ լըճին յափ տըղմասիկ ,
 Առ տըխրութեանց լըճաւ խորին,
 Կալ ծրփծրփիւ երերագին .
 Այս է իմ բաժին :

Իբր ըզծմտիկի՝
 Լըցեալ ի լոյս և ի ցօղիկ ,
 Բըխել աղբերքս զովագին .
 Փըթթել ծաղկունս բիւր ի ծոցին,
 Այս է քո բաժին :

Իբր ամուլ զաշտիկ՝
 Անկեալ խոպան տըրտմաղդեցիկ,
 Ուր ոչ դալար հըրճուէ զոգին .
 Ոչ մի ըստուեր ուղեւորին ,
 Այս է իմ բաժին :

Իբր ըզոսխակիկ՝
 Վարդից յուղէշ ցօղածրփիկ ,
 Երգել զոգւոյն քո կուտային .
 Դարուն զըւարթ և երկնային ,
 Այս է քո բաժին :

Իբր ըզբու մէնիկ՝
 Որ ջայլս առնու սըգաղդեցիկ ,
 Մընչել, հեծել, լալ մըթագին ,
 Ըղցայդ ցերեկ մահ ի սըրտին , . .
 Վահ , այս իմ բաժին :
 ԽՈՐԵՆ ԵՊ. ՆԱՐԹԵՑ

ԱՌ ՈՐԴԵԱԿՆ ԻՄ ԳԱՐԵԳԻՆ

ՄԱՅՐ ԵՒ ՄԱՆԿԻՔ

Ննջէր մանկիկն ու որրանին մօտ ,
 Մայրիկն հսկէր գլխիկոր .
 Երբ լուսաթեւ զուարթուն մ'իջաւ ,
 Եւ համբուրեց զայն անդորր :

« Ո՛հ, շատ է ցաւդ , բսաւ , մանկիկ ,
 Չէ արժանի քեզ աշխարհ .
 Վարդ երկնափթիթք ճակտիդ վըրայ ,
 Թառամեցան մինչ խաղաւ » :

Եւ նոյն ժամանս աչաց հանգեպ
 Բացաւ զերկնից պարունակ՝
 Բոլոր նշոյլ, բոլոր նըւագ .
 Բոլոր ծաղկունք ու հրեշտակք :

Հրատապ ցաւոց մէջէն զուարթ ,
 Չաչկունան եբաց ԳԱՐԵԳԻՆ ,
 « Մայրիկ իմ, ողջ լե՛ր » ըսելով

Սըացաւ ընդ սուրբ հրեշտակին ,

Սերտ է թունդ մայրն արթնալով

Ո՛հ , որդեակ , ուր ես կըսէր ,

Բայց անշունչ գի մ'ի գիրկս իւր կայր ,

Մանկանն հողին յերկինս էր . . . :

Ա. Յ. ԱՅՎԱԶԵԱՆ

ՕՐ ՕՐ ՎԱՐՄԱՆԿԱՆ

Ի ԴԵՄՍ ՀԱՆՈՑՆ ԻՒՐՈՅ

ՏԻԿԻՆ Մ. Ս. ՄԷԶՊՈՒՐԵԱՆ

Որրոցդ է շրուած սաղուած իմ թոռնիկ ,
Հերիք ծըծեցիր մօրկանըդ կաթիկ .

Թուիր իմ գիրկըս որ սրախ վըրան ,

Սեղմած հանգչեցնեմ ու դնեմ որան .

Հազար պաղիկ տամ թուշերուդ կըր ,

Դու պաճիկ ըրէ , ես ունիմ օրօր :

Այդ ինչ լաց ու ճիչ է քեզ փաթտելուս ,

Լացով շունչ աւիր լացով տեսար լոյս ,

Տոտիկներդ լացով տարիր մօր ծըծին ,

Լաց որ ճարտ հատած աշուկներդ խփուին ,

Մնուշ քուն մ'առնես , միշտ որոցիդ քով

Ես նստիմ հսկեմ օրօրս երգելով :

Հանգչէ որ աճիս ծաղկիս ու պտղիս

Դու նոր բաղդ նոր զարդն ես իմ պարտիղիս

Դարունն Անդրանիկս քեզ բերաւ պարգեւ

Մեր տանն առաջին արեւն ու բարեւ :

Ծերացայ ճամբադ նայելով ցայսօր .

Փա՛ռք , որ տեսայ քեզ եւ կըսեմ օրօր :

Քնացիր վարսենիկ տես քաղցրիկ հովեր

Տան ժողվել ճակտիւ շողեր մարդրտներ

Պաղիկներ քաղել վարդերես թուշեդ

Եւ տանել սփռել ուր քո Հայրապետ

Հանգչի վրան առած քարի մը կըտոր

Եւ ես իմ համար քեզ կըսեմ օրօր :

Սրտիս խոստումներ կը մեծնան երբոր

Նայիմ մէյ մ'երկինք , մէյ մ'ալ քո բոլոր .

Քո Արեւդ է նոր ծագած անաղօս ,

Իմ Արեւս մարը մոռնելու շատ մօտ ,

Չմոռած տեսնեմ գէթ երջանկութեանդ օր ,

Այս փառաքով միշտ կ'երգեմ իմ օրօր :

Ինչ փառք որ ստէն օր քեզ տի լսեմ .

Թոթովել հայրիկ մայրիկ ձեզ սերեմ :

Տեսնեմ որ կարդաս դրես հայ լեղուն

Կարես ու ձեւես , քեզ կոչեն գործուն

Հայ աղջրկանց մէջ փայլիս շնորհաւոր

Դեռ ինչե՛ր մաղթեմ կրկնելով օրօր :

Հրեշտակդ իմ ալ չեմ շարժեր որբան

Շարիկը փռեմ պտուկերիդ վըրան

Չեմ համարձակիր պաղիկ մ'ալ առնել

Վախեմ խաղաղիկ քունըդ պղտորել

Քնացիր իմ հողիս վարսենիկս աղուոր

Ալ ես դադրիմ երգելէ օրօր :


1872 Մայիս 11 ՏՕԳԹ. Ն. Ս. ՄԷԶՊՈՒՐԵԱՆ

ԵՐԿՈՒ ԲՈՅՐԵՐ

Մեղնից շատ առաջ կար մի թագաւոր,
 Հոգւով դեռ արի, գլխով ալեւոր.
 Մեծ ծով էր պատել նորա աշխարհը,
 Ոսկի ասացին գիտունք այն գարը:
 Ունէր նա երկու մատաղհան աղջիկ,
 Մինը խիստ սոգեղ, միւսն գեղեցիկ:
 Մի օր սգեղը ասաց միւսին,
 «Երթանք ծովի ամի, քուրիկ միասին»:
 Սիրունը գընաց առաջից արտում,
 Տգեղը ետնից ոխ պահած սրտում.
 Հաղիւ թէ ծովին ամին էր հասած
 Իր սիրուն քրոջ գըլորեց նա ցած:
 Կանչեց կիսամեռ սիրունը ջրից.
 «Քուրիկ իմ, քուրիկ, փրկէ ինձ մահից,
 Ես ունիմ տունը գեղեցիկ մանեակ,
 Ա՛ռ, էն քեզ լինի, պարգեւէ ինձ կեանքս»:
 «Ին առանց քեզ էլ կարող եմ ստանալ,
 Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ»:
 —Քուրիկ, թէ այդ էլ քեզ չէ բաւական
 Կուտամ քեզ ոսկի պըսակ պատուական:
 Ին առանց քեզ էլ կարող եմ ստանալ
 Ինձնից փրկութիւն դու բնաւ մի՛ յուսալ:
 Տգեղի սիրտը դարձել էր ժեռ քար.
 Քրոջ խնդիրը թողեց անկատար:
 Չկնորսը ծովը ձրգեց մեծ ուռկան,

Բռնեց մար ինը սիրուն աղջիկան,
 Ջրեկը հանեց, գըրեց ամի մօտ,
 Դատ ծաղիկ հանեց վերանքու շատ խոտ:
 Մի աշուղ անցաւ տեսաւ աղջիկան,
 Լացեց ու առաւ գըրեց ուսից վրան.
 Տարաւ իրան տուն այդ անգին գիւտը,
 Չորտոց ու նորա մարմնի դիւի հիւթը,
 Գեղեցիկ տաւիլ շինեց ոսկերից
 Քաղցրածայն լարեր հիւտեց մաղբրից.
 Երբսր ամէն բան պտտրաստեց կարգին
 Գընաց արքունիք տաւիլը ձեռքին:
 Երբ մըտաւ զահրիճ չըքեղ զարդարած
 Տեսաւ սգեղին փեսի մօտ կայնած]
 Բացեց բերանը, լարերին խըփեց
 Հիւրերու առջեւ քաղցրածայն երգեց
 «Հնչէ իմ տաւիլ, Հնչէ համարձակ
 «Հարազատ քոյրս խըլեց իմ պրտակ,
 «Լըսէ, իմ ծընօղ, լըսէ սիրական
 «Հարազատ քոյրս խըլեց իմ փետան.
 «Լըսէ ժողովուրդ, Լըսէ տխուրով,
 «Հարազատ քոյրս, գըլորեց ինձ ծով»:
 Միւս օր գահիճքը խարոյկ շինեցին,
 Մահապարտ քրոջ մէջը գըլորեցին
 Զուրը պըլըաց, աղջիկը կանչեց
 Իմ մեղաց համար Աստուած ինք պատժեց:

ԲԱՄԱՌ ԲԱԹԻՊԱ



ԱՂՈՒԷՍ ԵՒ ԱՔԼՈՐ

Վարդավառի տօն է այսօր ,
 Իջիր ծառէդ սիրուն աքլոր ,
 Ինձ հետ կարգա երգ շարական
 Մատաղն օրհները տէրունական :
 Աղուէս յայսպէս գէպ ծառ լվեր
 Ինչ համոզիկեր խօսք կը նետէր :
 Որուն աքլոր կը պոտտոտնանէր :
 Աւրեմն ինձ նախ հարկ է , աղուէս
 Որ ժամկոչի ձայն ձրգեմ ես

Ապա իջնել

Ու ժամ երգել :

Կուկու լիկու , տօն է այսօր ,
 Սուրբ կարապետն է փառաւոր :
 Աքլորիկին սյո նուրբ ձայնէն
 Շնիկն ըսթափ՝ հոռաւ անդէն ,
 Խաժնէր զաղուէս որ կ'ուռնար
 Բզբառուելով անդադար :
 Իսկ աքլորիկին ծառին վերէն
 « Աղուէս , կ'ասէր ծիծաղելէն ,
 Այդ անճոռնի ձայնով պիտի
 Երգէի՜ր տօն վարդավառի » :

ՎԱՀԱՆ Ծ. Վ. Տ. ՄԻՆԱՍԵԱՆ

Պարտիզանիկ



ԱՆՅՈՐԴԻ ԵՒ ՇՈՒՆԲ

Երկու հոգի իրիկունս գէմ
 Տեղ մը ելեր կերթային ,
 Ու հարկաւոր բանի վերայ
 Կը խօսէին մէջերսին :

Մէյ մ'ալ յանկարծ՝ հո՛ւրբաւ
 Տան մը դրանը տակէն
 Խոշոր շուն մը դուրս ցատկեց
 Վրայ վազեց հաչելէն :
 Միւսն շանդիէն ձայն ձրգեց ,
 Ետեւէն մէկն ալ ելաւ ,
 Ուն ալ փոքոյն էր պառկած ,
 Խաղոյն տեղէն վեր թրուաւ :
 Վերջապէս մէկ բռպէի մէջ
 Այնքան շուն դուրս թափեցան
 Մանր ու խոշոր՝ որ չնեղով
 Բոլոր ճամբան լեցուեցաւ :
 Մարդկանց մէկուն կիրքն ելաւ ,
 Դարձաւ գէպ սյո չնեղուն ,
 Վար ծռեցաւ որ առնու
 Քար մը նետէ գլխունուն :

« Թող խուր , եղբայր , բան չունի »
 Ըսաւ նորա ընկերը ,
 « Մեղք չէ՞ ձեռքիդ որ քարով
 Վարեա դու այդ լիրերը :
 Շուն ըսածդ խրատելուն

Ամենէն լաւ հնարքը
նոր երես չտալն է .
Չըջգիտե՞ս շան բարքն ու վարքը :»
Իրաւ հաղիւ տաւը քայլ
Մարդիկն առաջ որ գնացին
Շներն իրար նայելով՝
Չայներնին ալ կտրեցին :

Այսպիսի են աւասիկ
Չարախօսներն ամեն տեղ .
Ինչ ալ տեսնեն լաւ ու նոր՝
Պէտք է հաչեն ունայն տեղ :
Գուն քու ճամբէդ շանխոտոր
Ըրէ հանդարտ շորարին .
Թող որ շները հաչեն
Հաչեն հաչեն՝ կը դադրին :

ԳՈՒԼՈՎ

Թարգ. Գ. Ե. ԱՅՎԱԶԵԱՆ

Ա.Բ. ԳՈՋԱՐԻԿ

Ո՛վ է պղտիկն այն աղջիկ ,
Սիրուն աղւոր և ջրափիկի ,
Սեւ մազերով ոեւ աչքով
Ինքը բոլոր խառուտիկ ,
Ո՛հ , այն աղջիկ
է Գոհարիկ :

Երբոր իջնայ պարտեղիկ
Քաղել ըզվարդ կամ ջրամիկ ,
Դու չես կրնար որոշել
Ո՛վ է վարդ , ո՛վ Գոհարիկ ,
Ո՛հ , այն աղջիկ
է Գոհարիկ :

Երբոր Թռչուն ճըւճըւայ
Երբոր վառեակ կրակը տայ ,
Դու չես գիտեր Թռչունն է
Չէ նէ Գոհար որ ձայն տայ :
Ո՛հ , այն աղջիկ
է Գոհարիկ :

Գոհարիկն է այն ծաղիկ
Գահարիկն է այն Թռչնիկ ,
Որ այս տողիս փոխարէն
Ինձի տուաւ մէկ պաջիկ :
Ո՛հ , այն աղջիկ
է Գոհարիկ :

Ո՛վ է պղտիկն այն աղջիկ
Անհնազանդ չարածճիկ ,
Որ շատ սնդամ տունին մէջ
Յարու ցանէ փոթորիկ :
Չէ՛ , այն աղջիկ
Չէ՛ Գոհարիկ :

Մ. ՊԵՏԻՔԹԱՇԼԵԱՆ

Անմեղութիւն , Աշխատութիւն , Համեստութիւն

ՆՈՒԱԳ

ԴԵՍԻՆԻ

Ա.

Տեսե՞ր երբէք դու մանկիկ
Այսից խնձորքըն գողտրիկ
Որ յորբանի կայ ի քուն
Քաղցրիկ երգոյն ի նշխուն
Վարդից թերթեր են շրթունք
Որով ժըպտին զուարթունք ...
Եւ մինչ անյադ մօրն ի սէր
Քանայ խըփէ զիւր աչեր ,
 Զի՞նչ գեղանի
 Զի՞նչ սիրուն
Քան ի քուն Բնակողութիւն :

Բ.

Տեսե՞ր երբէք պատանեաւ
Ժիր ծնողաց ժիր որդեակ ,
Որ զարթեաւ այդուն այդուն
Տալ զանձըն յաշխատութիւն ,
Ուրախ դէմք իւր զուարթ աչիւնք
Սիրելի են նմա ուսմունք ,

Եւ մինչ ի գործ զողջոյն ախ ,
Հօր խնդ է և մօր պատիւ :
 Զի՞նչ գեղանի
 Զի՞նչ սիրուն
Քան մանուկ յԱշխատութիւն :
Գ.

Տեսե՞ր դու կոյս ծընդասէր
Իւր անուշիկ մօր պատկեր
Սիրոյ ծնողացն ընդ փոխան .
Տալ զանձըն ի խնամ տան :
Փոքունց՝ օրինակ բարի ,
Պատիւ հայրենի յարկի ,
Եւ մինչ յուսումն միտքն են կիրթ
Եւ Տեառն նուէր է իւր սիրտ ,
 Զի՞նչ գեղանի
 Զի՞նչ սիրուն
Քան կուսին Համեստութիւն :
 [Յ. ՈՍԿԱՆ

•••••

ՀԱՅՐԵՆ ԵՒ ՈՐԴԻՆ

Մանուկն ասէր ծընողին .
« Ահա մարին խտուերք լեռին .
Բարձրացաւ վեր չարեգակ :
Ընդէ՞ր տրտում ես , հայրիկ .
Զե՞ս լրսեր դու զձայն քաղցրիկ
Զոր տան սարեակ և՛ ասպունճակ :

Ընդէ՛ր ժըպտիս չեմ տեսներ
Շուրթերուդ վրայ, եւ ոչ սէր
Փայլի մէջ քո աչերուն:

Պայծառացաւ մեր աշխարհ,
Եւ զտրդերով վառ ի վառ
Ահա պճեալն է բնութիւն:

Բիւր երգերու հասաւ ժամ,
Եւ բիւր թեւեր լուսածամ
Վառին, շողան ակնախտիդ.
Մեղուն բղղայ, ծըծէ հոգ,
Մշակն արտին ցանէ յոյս,
Քարչէ փոխեն ալ իւր շիղ:

Ճերմակ ազնին մեր ծառեր.
Ատուած արիին է փռուեր
Եւ իւր ջահեր՝ մեր երկիր.
Հարսանիք են տիեզերքին.
Այս ընդհանուր հիմենին
Հայրիկ, դու չնս կտրեկիր:

Վերը ձայներ չնս լլսեր.
Թուփին է օր երգէ սէր
Բարձր, բարձր երկնի մէջ.
Եւ հոգնայոյզ մարդէ՛ն մտրմանդ,
Որ ծածկեն զայդ դարեւանդ,
Հէզ ծով, առնեն ելի էջ:

Թեթեւ ամպերը դիտեմ,
Որ հոտանեն մեղմանմ

Կապոյտն երկնի լուսափիւռ.
Մինչ մազերուս մէջ փափկիկ,
Զոր չես գգուեր ալ, հայրիկ,
Խաղայ մանուկն զեփիւռ:

Հեռուն լրսեմ մէջ հովտին
Նըւաղ ճիչեր զոր մանկտին
Բառնայ, թեթեւ պարելով.
Նոցա ճակատ քնալիւթը,
Զոր ծածկեն ձորն եւ ծործոր,
Փայփայել դայ անող հով:

Եւ ակնդէտ կան ի վեր,
Եւ այլ եւս չեն կաքաւեր
Ըզմայլանաց տալ յագուրդ.
Զի մանկական սրտերուն
Անգամ տարտամ, երերուն
Խօսի բնութեան այդ խորհուրդ:

Սեաւ սեաւ հոգեր քո ճակատ
Է՛ր մթնազնեն սիրտիս,
Հայր իմ, ո՛վ հայր սիրելի.
Որպէս սովոր ես, ընդէ՛ր
Քո հէք որդին չես գրկեր
Բաղուններովդ փարելի:

Ընդէ՛ր տրխուր ես, հայր իմ.
Եւ քո աչեր մշտերիմ
Ընդէ՛ր յինէն դարձունես,
Մեթէ չըզգամ անսահման

Ձեզումն այս վեհ խնդրութեան .
Միթէ չըզգամ դու ինձ պէս :

Ընդէ՞ր տըխուր ես . պարտեղ՝
Իջաւ մայր իմ, ահա տե՛ս ,
Քաղեղ յասմիկ , մանիշակ .
Ոստոց ետին է պահուեր ,
Եւ կարգայ ինձ հրսուէր
Ներս բառբառն անուշակ :

Ընդէ՞ր տըխուր ես հայր իմ .
Ամենքն ուրախ են , հրճուին
Երկինք , երկիր , ծով , եմակ .
Ծիծաղ ի շուրթ բնութիւն
Խայտայ զերդ նոր հարս ժպտուն :
— Իսկ թշուառները , որդեակ :

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍԷԹԵԱՆ



ԶԴԱՅՈՒՆ ՄԱՆՈՒԿՆ

ԱՌ ԻՒՐ ԿԱԹՈՂԻՆ ՄԱՅՐ

Մայրիկ , ինչո՞ւ դու ազեխարչ ,
Դէմքդ կախած միշտ գլխաշարժ ,
Տըբտում տըխուր , գիշեր ցորեկ ,
Ձեա մեղքեանար քո խեղճ տըղեկ :

Արի՛ մայրիկ , ալ դու մի՛ լար ,
Որ ես չըլլամ անմխիթար :

Աստուածորդին մանուկ սիրեց ,
Անոր համար առ ինք կոչեց ,
Ես կ'աղաչեմ էն Յիսուսին ,
Որ ողորմի քո սեւ բաղդին :

Արի՛ մայրիկ , ալ դու մի՛ լար ,
Որ ես չըլլամ անմխիթար :

Մանկիկ լեզու աւ միշտ կողօթեմ ,
Յաջաղութիւն բարեմաղթեմ ,
Որ իմ հայրիկ շուտով դառնայ ,
Եւ քո սըգոյ քօղ վերանայ ,

Արի՛ մայրիկ , ալ դու մի՛ լար ,
Որ ես չըլլամ անմխիթար :

Դեռ պզտիկ եմ տիով մտով .
Ձիւ մի՛ տանջեր սուգ երեսով ,
Գիտեմ , քո գութ շատ առատ է ,
Բայց ինչ օգուտ արտասուելէ :

Արի՛ մայրիկ , ալ դու մի՛ լար ,
Որ ես չըլլամ անմխիթար

Թէեւ երկիրը անդ թայեր ,
Ո՛ւր այժմ հայրիկ մարդ չը գիտեր ,
Ի՛նչ բեռերու տակ կը հեծէ ,
Բայց մեր Աստուած խիտ շատ մեծ է .

Ուրեմն մայրիկ , ալ դու մի՛ լար :
Յուսամք Անոր ի մխիթար :

Մ. ՄԻՐԱՆՈՐԵԱՆ



ԱՌ ԴԱՌԱՌԱՅԻ ՊԱՆԴՈՒԽՏՍ

ԿԱԹՈՂԻՆ ՄԱՅՐ

ԱՌ ԻԻՐ ՄԱՆՈՒԿՆ ԶԳԱՅՈՒՆ



Արի՛ որդիս իմ՝ աչքի լոյս ,
 Աստուորիս մէկ հատիկ յոյս :
 Հայր մ'ունէիր տարւով երսուն ,
 Կանանչ կտրիճ և շատ թօռուն ,
 Զմեղ սիրէր սիրովն անհուն ,
 Ա՛խ հեռացաւ անցեալ աշուն :
 Արի՛ որդիս իմ՝ աչքի լոյս ,
 Աստուորիս մէկ հատիկ յոյս :

Քանի յիշեմ իւր պաժ պալեղ՝ (պոյ-պօս)
 Աչքէս վաղեն իբրեւ հեղեղ ,
 Բիւր կայլակներ սուրբ արտասուաց ,
 Սրտիս խորէն յար անմուաց ,
 Արի՛ որդիս իմ՝ աչքի լոյս ,
 Աստուորիս մէկ հատիկ յոյս :

Նա պարտք ունէր զուրուշ հաղար ,
 Զողորմեցաւ անգութ Նաղար (Նաղարէթ) ,
 Որ մէկ տուաւ միշտ չորս գրեց ,
 Մինչեւ քո հօր տունն աւերեց ,
 Արի՛ որդիս իմ՝ աչքի լոյս ,
 Աստուորիս մէկ հատիկ յոյս :

Են սեւ գիշեր , երբ քո հայրիկ ,
 Ուղեց թողուլ զքո մայրիկ ,
 Պանդխտու թեան ճամբան բռնել ,
 Փախչիլ երթալ ճար մը գտնել ,
 Դու մնացիր ինձ աչքի լոյս ,
 Աստուորիս մէկ հատիկ յոյս :

Մերկ , անօթի ելաւ գնաց ,
 Խոկի (քնաւ) չասաց բարեկամաց ,
 «Մնայք բարեաւ ես կը գնամ» ,
 Աստուած գիտէ թէ ողջ դառնամ ,
 Արի՛ որդիս իմ՝ աչքի լոյս ,
 Աստուորիս մէկ հատիկ յոյս :

Ահա այսպէս դու դեռ մանկիկ ,
 Ոտքեր տըրեիս քո խեղճ հայրիկ ,
 Բազդին առաջ խոնարհելով ,
 Առաւ քալեց լաց ու կոծով ,
 Արի՛ որդիս իմ՝ աչքի լոյս ,
 Աստուորիս մէկ հատիկ յոյս :

Բայց ո՛ւր գնաց ես չգիտեմ ,
 Գիշեր ցորեկ միշտ ա՛խ քաշեմ ,
 Սըրտիս պըրակ կըրակն ինկած ,
 Չիս կը վառէ չգաղաքած ,
 Արի՛ որդիս իմ՝ աչքի լոյս ,
 Աստուորիս մէկ հատիկ յոյս :

Իմ կլորիկ՝ զաւակ սիրուն,
Բէքդ նման հօրդ աշերուն,
Երբ կիրիշինմ (նայիլ) կը յորբոքիմ,
Սրտիս ցաւէն շատ կը յուզիմ:

Արի՛ սրտիս իմ՝ աչքի լոյս,
Աստուորիս: Եկ հատիկ յոյս:

Ըռմ (մինչեւ) հինգ տարի պէտք է աչքի ել,
(սպասել)

Թերեւս մէկ դիր մը կամ լո՛ր առնել,
Թէ որ չը գայ ել ձեռք քաշեմք,
Մեր վիճակի ճարը տեսնեմք:

Արի՛ սրտիս իմ՝ աչքի լոյս,
Աստուորիս մէկ հատիկ յոյս:

Մ. ՄԻՐԱԽՈՐԵԱՆ

ՅԱՆՅԵՐ ՄԵՂՈՒԲ

Մէկ տըղեկ՝ մի նոր ոտք ելած՝
Պարտիզին զուռը՝ գլուտաւ բայ,
Ուրախութեամբ ցատքըտելով
Վազեց խաղալ խոտով ծաղկով:
Հոն մէկ մեղու մ'ալ կար պըղտիկ,
Բայց ոսկեգոյն ու խոտուտիկ,
Թեւերն էին արծաթի պէս,
Փայլուն գլուխ պիլլու երես,
Միայն թէ սուր գէնք մ'ալ ունէր

Որ ետի դին լաւ ծածկեր էր:
Տըղտըղալով բըզըղալով
Մնցաւ դարձաւ տըղան չորս քով:
Ան փալիբըւն գոյնն որ տեսաւ
Տըղուն գըլխիէն խեղքը թըռաւ,
Խոտի ծաղկի ո՞վ կը նայի,
Մեղուն ետեւն ընկած չորս դի՛
Քանի՛ անգամ ձեռքը զարկաւ,
Բայց բըռնելու ճար մը չեղաւ:
Մեղուն նորէն տըղտըղալով
Թըռաւ նստաւ ծաղկներու քով:
Թաթիկը բաց միշտ ետեւէն
Տըղան կ'երթար հեւհեւալէն,
Ինչուան մեղուն ալ ձանձրացած՝
Վարդի մը ծոց ինկաւ յոգնած:
Տըղուն ուղածն ալ առ չէ՞ մի,
Կաճաց կամաց մօտ կը հասնի:
Մէկ կըլլայ ձեռքը վերցընել
Վարդն ու մեղուն մէկէն սըխմել:
Հոն ալ մեղուն ճարը հատած,
Մնիւելք տըղուն գէմ բարկացած,
Ծածկած ասեղը կը հանէ
Ու ձեռքը լաւ մը կը ծակէ:
Փուճ տեղ վա՛յ վա՛յ կանչուրուելով
Տըղան ցաւէն կիյնայ լալով:

Մտիկ ըրէ՛ք անխորճ տղաք
Որ չըճանչցած փափագներնուդ

Շատ տեղ ետեէն ինկած կ'երթար
Դիտցիք գիտցիք որ քրտերնուդ
Խայթոց ու թոյն կուտան ծածուկ
Անուշ կամքերն որ կ'ուզէք գուր:

Հ. Գ. ՀԻՒՐՄԻՒԶԵԱՆ

ԱՌ ՄԱՆՈՒԿՆ

Ուրախութիւն քեզ անպակաս
Ով գու մանուկ տիրելի,
Ծլիս ծաղկիս և ծերանա՛ս,
Տալով պատու արժանի:

Որպէս ծաղիկ մանուկ քաղցր ես
Եւ չնորհագեղ որպէս օր:
Մանուկ, մանուկ ինձ չ'խաբեա՛ս,
Միշտ կաց, այդպէս լուսաւոր:

Նայիր վերեւ, տես ինչ սիրուն:
Այն տեղ փայլում են աստղեր,
Եւ անթիւ են, և շողշողուն,
Որպէս երկու քո աչեր:

Այնտեղ, հոգեակ, բնակում է
Մեր սուրբ հայրը երկնքի
Նա՛ է, որ մեզ ուղարկում է,
Եւ կեանք, և Սէր, և հոգի:

Նա ծագում է իւր արեգակ
Ամենայն օր մեր վերայ,

Որ զուարճանաւ որպէս թռչնակ,
Օրհնէ՛ անուն սուրբ Նորա:

Ունի որդի մի՛ Միածին,

Նա է փրկիչ աշխարհի:

Նա խաչ ելաւ, տաւեց հոգին...

Ո՛ր գու լինիս մարդ բարի:

Նա սիրելով իւր թշնամի

Օրհնեց խաչին և ներեց,

Եւ մեզ գրեց իւրեանց սրտիք,

Սիրել միմեանց պատուիրեց:

Նանեզու թեամբ յաղթեց չարին

Եւ մեզ ոտաց, որ և մեք

Հետեւինք այդ օրինակին:

Զհպարտանանք մեք թերեւ:

Մանուկ սիրուն, աղօթք արա՛,

Եբր գու գլխիդ խնայահած,

Համբարում ես պատկերդ ահա՛

Ոսկեակաղ դարդարած:

Եւ ժպտում է որպէս շուշան

Անհոգ մանուկն մօր գրկին:

Այսպէս թռչնակը ճիւղի վերան,

Օրհնում է իւր հրեշտակին:

Եկէ՛ք Հայոց եկեղեցի

Այն տեղ կտեսնէք զմայլւած

Պայծառ գէմբըդ այդ երկնացի

Գարնան վարդը կիսարաց:

Ս. ՇԱՀԱԶԻԶԵԱՆ

Վ Ա Ր Դ

Քերթողք հին ու նոր աշխարհի
 Կոչեն ծաղկանց քեզ թագուհի
 Զի քեւ գարուն՝ պտուղաւոր

Գայ միշտ առ մեզ աւետաւոր :

Շողն՝ իւր սակի, ցօղն՝ իւր յակինթ

Զօնեն քեզ նախ մանեակ ու զինդ

Սիրէ զեփի ու տալ քեզ նուէր

Իւր նախկին զով, նախկին խնկեր :

Քեզ ախակը սիրտըդու :

Ուղերձէ նախ՝ զիւր պելու :

Եւ ծոցդ ընտրէ մատուռ, տաճար,

Քաղել իքէն երգոյն հանճար :

Քեւ կոյս պճնէ գեղանորոտ

Իւր լուսնկայ ճակատ շիկնուտ :

Եւ իւր գեղձան հերոց բոլորք :

Պաշրիս՝ փնջիւք քո գեղուրք :

Քեւ և խորան ի հովտին

Ծաղկաղարդի, պէս դրախտին :

Բոյր քո համր անդ ի խորան,

Քան բիւր աղօթք է ճարտատան :

Մէջ դժակեացդ երբ փշաւէտ,

Բացուիս ծիլ՝ ծիլ՝ ու հոտաւէտ,

Բանա՛ն և մեր սրտեր յախրած

Ծծես ժանգերն անտի փշտոց :

Վայրն ուր փթթիս եղեմն յառնէ,

Խուսկիդ մատուռ մ'աղօթք արժէ :

Ու կնդրկացդ հետ՝, մեր հոգին,

Իթեւ սիւքին, տանիս յերկին՝ . . . :

Փշոտ կենաց ճիւղին վերան

Տիոցս մէն մի թօնա՛ծ գարնան

Միջէն, տեօի փթթումն ըղձիս

Եւ ժպտիլն ծաղկոտ յոյսիս :

Թէ մեղուներն նախ՝ զնեկտար

Ծծեն ի քէն նախանձարար,

Է՛ր և ես զիմ մեղրն զգացմանց

Շիկնիմ՝ քաղել ի քո ծաղկանց :

Շող լուսնեկին սիրեմ և ես

Ծծե՛լ, ստուերց մէջ, քեզի պէս,

Եւ փոխելով զայն նոր խնկի,

Յղել յերկինս, պէս աղօթքի :

ԻՕԶ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ԳՐԻԶԱԿԱՆ ԱՂԶԻԿՆ

Գիւղական աղջիկ եմ ես զամբիւղաչէն

Եկեալ աստ զամբիւղօք ի հայոց երկրէն,

Յուսամ զի հայ տիկնայք և պարոնայք Հնդկաց

Բարձր գին տալցեն իմ սիրուն զամբիւղաց :

Առ զամբիւղ առ զամբիւղ առ զամբիւղ

յօտար աղջկանէս :

Ձամբիւդը իմ են յարմար են ասղնագործու թեան
 Պահել անդ ղմասնոց, զթել, դասդաման .
 իմ ձեռօք եմ գործեալ ես զամենեսին ,
 երբ խաշինք և գառինք իմ զինեւ խայտային :

Առ զամբիւդ, և այլն :

Դանձք բազումք, ցաւք բազումք կան յայտմ
 յաշխարհի
 Պէտք սակաւք, ցաւք սակաւք կան յիմում երկրի
 Ձայգի մի ունէի՝ զամբիւդ գործէի,
 Լոկ կաթամբ և պանրով երջանիկ էի :

Առ զամբիւդ, և այլն :

Աստ սերկեւիլ, ծիրան և խաղող չի կայ,
 Բայց միայն արիւտ, գիւլայ և ատայ
 Ա՛խ, երբ իցէ, զի արժանի եղէց վերլոտին
 Հաշակել զպատուս իմոյ պարտիզին :

Առ զամբիւդ, և այլն :

Ապա դուք լաւ տիկնայք՝ զամբիւդս իմ առէք,
 Գիւզական աղջըկանս սիրով օգնեցէ՛ք .
 Զի գարձեալք յերկիր իմ հանդերձ ձեր շնորհօք՝
 Զերախտիս ձեր առեալ՝ դուկեցից բազմօք,
 Առ զամբիւդն ևն .

ՄԵՍԻՐՈՊ ԹԱՂԻԱԳԵԱՆՑ

ԿՈՑՍՆ ԱՌ ԼՈՒՍԻՆ

Երբոր գիշեր սեւանգոյր
 Թեւօքն ստուերց՝ զինչ վարագոյր,
 Իջնէ՛ վերայ բնութեան թատեր, յ
 Խւր մոգ տեսլեամբքն յուզել սրտեր :

Գանձք քաղցր է յայնժամ, Լուսին,
 Մոռնալ ամէն հաճոյք ոսին,
 Ու պլլուած քո շողերուն
 Մա՛ն գալ արբշիւ ու մայրուն :

Մա՛ն գալ ծովափն՝ ուստ թէ մեկնի
 Մակոյկ կեանքին, միշտ կ'հասնի
 Անալեկո՛ծ, ի հանգրուան
 Երանութեան աներկեւան :

Եւ օրօրու ի՛նչ նշուլիդ հետ
 Ա՛ն գիցափառ ալեացն ի վէտ,
 Ոյց մերթ արծաթ փրփուրները
 Շնան Գեղոյ : Սիրոյ մայրը :

Մա՛ն գալ մէջ այն Ագին գրախտին,
 Ուր դժնիկն իսկ չի փշոտի,
 Եւ ուր՝ հոգիս՝ մեղամաղձոտ
 Գեւ իւր սիրոյն ընու կարօտ :

Եւ յայն ծաղկանց ծոցն , ուր , Լո՛ւսնակ ,
 քնե՛ս , տերեւն առած վերմակ ,
 Թող ինձ նետուի՛լ , զինչ շող մ'աստղի ,
 Թեւեթուդ մէջ լուսածղի :

Եւ հոն զոյգ մի բբայ հանգոյն ,
 Զոր կը փակէ նոյն քաղցրը քուն ,
 Մեղրանուրջիդ մէջ , ա՛հ , մարիլ :
 Եւ հետդ յԱտուած սլանա՛լ , վառիլ :

Մերթ ի նոճիս՝ քառերեւ
 Դողդոջե՛լ լուռ շիրմաց վերեւ ,
 Ու սիրելւոյն այցին կարօտ
 Նշխարց ձօնել սիրոյ նարօտ :


Մերթ պլպլա՛լ , նե՛րսն հիւղելիք ,
 Տա՛լ լոյս անլոյս որբին , հիւրին ,
 Ու արցունքի սրտաբիւնին
 Խառնե՛լ ժպիտն սփոփումին :

Լո՛ւսին , դու իմ Բեւեռ-Սատղն ես ,
 Հոգիս՝ մագնէտն , զոր քեզ քաշեա ,
 Շողդ՝ ինձ ժպիտ , ցողդ՝ ինձ արցունք ,
 Կազմեն կեանք իմ մաղձոտ ւ՝ անձուկ :

Մէջ մուժ ցայգուն ա՛յգս ես պայծառ ,
 Մէջ տխրանաց հրճումն քա անճա՞ռ ,
 Հոգիս առ քեզ միշտ սիրատարփ ,
 Զինչ լուսնկայ-ծաղիկն առարփ :

Աստղ , դու Սեղան , և ես անդ քեզ
 Եմ երկնածօն մի ողջակէզ ,
 Այրէ՛ , խառնէ՛ զիս շողիցդ հետ ,
 Եւ փայլեցո՛ , հետդ առ յաւէտ :

ՄԱՌԻ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ



ԵՐԿԻՆՔ ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Զծով չափէ թո՛ղ գիրուն ,
 Զերկին դիտէ իմաստուն ,
 Թո՛ղ սիրաբեկ սիրտ դատարկ
 Վրվրներու վրայ ակնարկ
 Անյոյս հալի և գոչէ ,
 Թէ կեանք մեր այս ոչինչ է :
 Թո՛ղ մարմնասէր , լի ահով ,
 Տատամնի վտանգով ,
 Թո՛ղ անզգայ ստոյիկեան
 Տեղաւորուի իրր արձան :
